ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերի մասին

եռամսյակային հաշվետվություն

(ՁԼՄ մշտադիտարկման արդյունքների ամփոփում)

2015թ. հուլիս-սեպտեմբեր ժամանակահատված

ՆՈՐՎԵԳԻԱՅԻ ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Վանաձոր, 2015թ.

Հաշվետվությունը պատրաստվել է «Ոստիկանության հետ հարաբերություններում քաղաքացիների իրավունքների պաշտպանության արդյունավետության բարձրացում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից Նորվեգիայի հելսինկյան կոմիտեի ֆինանսական աջակցությամբ:

Զեկույցում հնչած կարծիքները ՀՔԱ Վանաձորի գրասենյակինն են և հնարավոր է, որ չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:

Կազմող՝ Անուշ Համբարյան
Խմբագիր՝ Արթուր Սաքունց

ՀՔԱ Վանաձորի գրասենյակ Հայաստան,
Վանաձոր 2001, Հեռ.՝ (+374 322) 4 22 68
Ֆաքս՝ (+374 322) 4 12 36
Էլ. փոստ՝ hcav@hcav.am
www.hcav.am

Նախաբան

Ոստիկանության աշխատակիցների կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերը հավաքագրելու նպատակով մշտադիտարկվել է 13 առցանց լրատվամիջոց և ՀՀ Հատուկ Քննչական Ծառայության պաշտոնական կայքը[1]:

Դեպքերն առանձնացվել և վերլուծվել են լրատվամիջոցների տարածած տեղեկատվության հիման վրա, որի հավաստիության համար պատասխանատվություն են կրում տարածող լրատվամիջոցները: Մարդու իրավունքի խախտման դեպքերն աղյուսակավորվել են ըստ ոստիկանության աշխատակիցների կատարած գործողությունների և դրանց վայրերի:

Արձանագրված դեպքերը բաժանվել են երկու խմբի՝ անհատական դեպքեր[2] և հավաքների ժամանակ կամ դրանց մասնակցելու արդյունքում տեղի ունեցած դեպքեր: Հավաքների մեջ ներառվել են բոլոր հանրային միջոցառումները՝ ցույց, նստացույց, երթ և այլն:

2015թ. առաջին, երկրորդ և երրորդ եռամսյակների ընթացքում գրանցված մարդու իրավունքի խախտումների դեպքերի մասին համեմատական ամփոփ տվյալներ

ԶԼՄ-ների մշտադիտարկման ընթացքում հաշվետու ժամանակահատվածում՝ 2015թ. հուլիս-սեպտեմբեր ամիսներին, արձանագրվել է ոստիկանության աշխատակիցների կողմից մարդու իրավունքի խախտումների 72 դեպք: Երկրորդ եռամսյակի համեմատությամբ դեպքերի թիվը նվազել է 13-ով (կամ 15%-ով), իսկ առաջին եռամսյակի համեմատությամբ աճել է 16-ով (կամ 28%-ով)[2]:

Դեպքերից 42-ը տեղի են ունեցել հավաքների ժամանակ կամ հավաքներին մասնակցելու հետևանքով, որը երկրորդ եռամսյակի նույն ցուցանիշի համեմատությամբ նվազել է 7-ով (կամ 14%-ով), իսկ առաջին եռամսյակի համեմատությամբ աճել է 16-ով (կամ 28%-ով)[3]:

Հաշվետու ժամանակահատվածում գրանցվել է մարդու իրավունքների խախտման 30 անհատական դեպք, որը երկրորդ եռամսյակի նույն ցուցանիշից նվազել է 6-ով (կամ 17%-ով), իսկ առաջին եռամսյակի համեմատությամբ աճել է 12-ով (կամ 67%-ով)[4]:

---

[1] Մշտադիտարկված լրատվամիջոցներն են՝ www.aravot.am, www.galatv.am, www.azatutyun.am, www.1in.am, www.168.am, www.armtimes.am, www.hraparak.am, www.epress.am, www.lragir.am, www.ilur.am, www.news.am, www.panorama.am, www.a1plus.am, www.ccc.am:

[2] Տե՛ս Աղյուսակ 1

[3] Տե՛ս Աղյուսակ 3

[4] Տե՛ս Աղյուսակ 2

Առաջին եռամսյակի ընթացքում խախտվել է 10 իրավունք, երկրորդ եռամսյակի ընթացքում՝ 12, իսկ երրորդ եռամսյակի ընթացքում՝ 13 իրավունք:

Եթե նախորդ երկու եռամսյակներում ամենաշատը խախտվել էին անձնական ազատության և անձեռնմխելիության ու խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունքները, ապա երրորդ եռամսյակում ամենաշատը խախտվել են խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունքը և ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունքը: Խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունքի խախտումների թիվը երկրորդ եռամսյակի համեմատությամբ նվազել է 3-ով, առաջին եռամսյակի համեմատությամբ՝ 2-ով (համապատասխանաբար 20-ից և 19-ից դառնալով 17), իսկ ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունքի խախտումների թիվը երկրորդ եռամսյակի համեմատությամբ աճել է 5-ով, իսկ առաջին եռամսյակի համեմատությամբ՝ 9-ով (համապատասխանաբար 10-ից և 6-ից դառնալով 15)[5]: Ընդ որում՝ ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունքի խախտումների 15 դեպքերից 11-ը (կամ 73%-ը) եղել են անհատական դեպքեր, որը նախորդ եռամսյակի նույն ցուցանիշի համեմատությամբ աճել է 4-ով (կամ 57%-ով), իսկ առաջին եռամսյակի նույն ցուցանիշի համեմատությամբ՝ 8-ով (գրեթե 3 անգամ)[6]:

Երրորդ եռամսյակի ընթացքում գրանցվել է անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի խախտման 12 դեպք դեպք՝ նույնքան, որքան առաջին եռամսյակի ընթացքում և 9-ով (կամ 43%-ով) պակաս երկրորդ եռամսյակի ընթացքում գրանցված դեպքերից: Դեպքերից 4-ը եղել են անհատական դեպքեր, 8-ը գրանցվել են հավաքների ժամանակ:

Նկատելիորեն աճել է անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքի (ներառյալ հոգեբանական ճնշումներից, սպառնալիքներից զերծ մնալու իրավունքի) խախտումների թիվը՝ առաջին կիսամյակի ընթացքում գրանցված 7 դեպքից և երկրորդ կիսամյակի ընթացքում գրանցված 9 դեպքից հասնելով 14-ի, որոնցից 7-ը տեղի են ունեցել հավաքների ժամանակ[7]:

Երրորդ եռամսյակում գրանցվել է լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն իրականացնելու իրավունքի խախտման 1 դեպք, մինչդեռ առաջին եռամսյակում գրանցվել էր տվյալ իրավունքի խախտման 2 դեպք, իսկ երկրորդ եռամսյակում՝ 9 դեպք[8]:

Երրորդ եռամսյակում գրանցվել է նաև ազատ տեղաշարժվելու իրավունքի, տեղեկատվություն ստանալու իրավունքի, կարծիքն ազատորեն արտահայտելու իրավունքի, սեփականության իրավունքի խախտման 1-ական և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքի խախտման 3 անհատական դեպք[9]:

Հավաքների հետ կապված արձանագրվել է արդար դատաքննության իրավունքի, իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի, խտրականությունից զերծ մնալու

[5] Տե՛ս Աղյուսակ 1
[6] Տե՛ս Աղյուսակ 2
[7] Տե՛ս Աղյուսակ 1 և 3
[8] Տե՛ս Աղյուսակ 1
[9] Տե՛ս Աղյուսակ 2

իրավունքի, կարծիքն ազատորեն արտահայտելու իրավունքի 1-ական դեպք և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքի 3 դեպք[10]:

Ինչպես առաջին երկու եռամսյակներում, երրորդ եռամսյակում նույնպես ամենաշատ դեպքերը գրանցվել են Երևանում, սակայն երկրորդ եռամսյակի հետ համեմատած նվազել են 11-ով (կամ 16.4%-ով), իսկ առաջին եռամսյակի հետ համեմատած աճել են 20-ով (կամ 55.5%-ով)[11]:

2015թ. առաջին եռամսյակում գրանցված մարդու իրավունքի խախտումների 56 դեպքերից 22-ի դեպքում ընդհանուր թվով 123 խախտում է տեղի ունեցել, իսկ մնացած 34-ի դեպքում առկա տեղեկատվության հիման վրա հնարավոր չէ որոշել, թե քանի անգամ է մարդու իրավունք խախտվել: Երկրորդ եռամսյակում տեղի ունեցած 85 դեպքերից 59-ի դեպքում մարդու իրավունքի 434 խախտում է տեղի ունեցել, իսկ մնացած 26-ի դեպքում առկա տեղեկատվության հիման վրա հնարավոր չէ որոշել, թե քանի անգամ է մարդու իրավունք խախտվել: Երրորդ եռամսյակում տեղի ունեցած 72 դեպքերից 64-ի դեպքում մարդու իրավունքի ընդհանուր թվով մոտ 400 խախտում է տեղի ունեցել, իսկ 8-ի դեպքում առկա տեղեկատվության հիման վրա հնարավոր չէ որոշել, թե քանի անգամ է մարդու իրավունք խախտվել[12]:

[10] Տե՛ս Աղյուսակ 3
[11] Տե՛ս Աղյուսակ 4
[12] Տե՛ս Աղյուսակ 5

2015թ. 3-րդ եռամսյակի ընթացքում ոստիկանության կողմից մարդու իրավունքի խախտումների անհատական դեպքերի մասին ընդհանուր տվյալներ

2015թ. հուլիս-սեպտեմբեր ամիսներին արձանագրվել է ոստիկանության աշխատակիցների կողմից մարդու իրավունքների խախտման 30 անհատական դեպք, որոնցից 1-ի դեպքում խախտվել է ազատ տեղաշարժվելու իրավունքը, 1-ի դեպքում՝ ազատ տեղաշարժվելու և տեղեկատվություն ստանալու իրավունքը, 4-ի դեպքում անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը, 7-ի դեպքում՝ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքը (ներառյալ հոգեբանական ճնշումներից, սպառնալիքներից զերծ մնալու իրավունքը), 3-ի դեպքում՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը, 1-ի դեպքում՝ լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն իրականացնելու իրավունքը, 1-ի դեպքում՝ կարծիքն ազատորեն արտահայտելու իրավունքը և անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը, 1-ի դեպքում՝ սեփականության իրավունքը, 11-ի դեպքում՝ ֆիզիկական բռնությունիզ զերծ մնալու իրավունքը:

Անհատական դեպքերից 14-ը տեղի են ունեցել քաղաք Երևանում, 4-ը՝ Տավուշի մարզի Նոյեմբերյան քաղաքում, 3-ը՝ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում, 2-ը՝ Շիրակի մարզի Ախուրյան քաղաքում, 2-ը՝ Կոտայքի մարզի Աբովյան քաղաքում, 2-ը՝ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքում, 3-ի դեպքում վայրը հայտնի չէ:

Անհատական դեպքերից 1-ի դեպքում խախտվել է 28 հոգու իրավունք, 1-ի դեպքում՝ 5 հոգու իրավունք, 1-ի դեպքում՝ 4 հոգու իրավունք, 1-ի դեպքում՝ 3 հոգու իրավունք, 1-ի դեպքում՝ 2 հոգու իրավունք, 23-ի դեպքում՝ 1 հոգու իրավունք, իսկ 2-ի դեպքում հայտնի չէ, թե կոնկրետ քանի հոգու իրավունք է խախտվել:

Հաշվետու ժամանակահատվածում գրանցված անհատական դեպքերի հակիրճ նկարագրություններ՝ ըստ խախտված իրավունքի և ոստիկանության գործողության տեսակի (կամ անգործության)

	Դեպքերի թիվ
Ազատ տեղաշարժվելու իրավունքի խախտում	**1**
• **ազատ տեղաշարժը խոչընդոտելը**	**1**
Դեպք 1. Սեպտեմբերի 7-ին քաղաքացիական հագուստով ոստիկանները Երևանի Վազգեն Սարգսյանի անվան «Հանրապետական» մարզադաշտում տեղի ունեցած Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարի Հայաստան –	

Դանիա հանդիպման ժամանակ քաղաքացիական հագուստով և համազգեստով ոստիկանները խոչընդոտել են քաղբանտարկյալ Շանթ Հարությունյանի որդի Շահեն Հարությունյանի և ընկերների ազատ տեղաշարժվելու իրավունքը՝ նրանց նկատմամբ խիստ վերահսկողություն սահմանելով[13]:	
Ազատ տեղաշարժվելու իրավունքի խախտում, Տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտում	**1**
• **ազատ տեղաշարժը խոչընդոտելը**	**1**
Դեպք 1. Հուլիսի 2-ին Բաղրամյան պողոտայի՝ դեպի ԱԺ և նախագահական նստավայր տանող հատվածում ոստիկանության աշխատակիցները կանգնեցրել են բանակում խաղաղ պայմաններում զոհված զինծառայողների ծնողներին և թույլ չեն տվել առաջ շարժվել այն դեպքում, երբ այդ հատվածով անցնում էին այլ քաղաքացիներ: Զոհված զինծառայողների ծնողները ցանկանում էին գնալ ԱԺ և նախագահական նստավայր իրենց դիմումների պատասխանները ստանալու[14]:	
Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի խախտում	**4**
• **բերման ենթարկելը**	**4**
Դեպք 1. Հուլիսի 7-ին քաղաքացիական ակցիաների մասնակից Վարդգես Գասպարիի տան դիմաց գոմաղբ է հայտնվել այն բանից հետո, երբ նա ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի տան դիմաց պիկետ է իրականացրել: Նա գոմաղբը տարել է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի տան մոտ, որից հետո ակտիվիստին տարել են ոստիկանության Կենտրոնականի բաժին: Նա հրաժարվել է որևէ բան ստորագրել, որից հետո ազատ է արձակվել[15]:	
Դեպք 2. Հուլիսի 20-ին ոստիկանության ծառայողները քաղաքացուն անհիմն կերպով տեղափոխել են ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Ախուրյանի բաժին և տևական ժամանակ պահել են այնտեղ[16]:	
Դեպք 3. Սեպտեմբերի 28-ի, լույս 29-ի գիշերը ոստիկանության Կենտրոնականի բաժին են բերման ենթարկվել «Չե՛ք անցկացնի» նախաձեռնության չորս անդամներ՝ Արթուր Մինասյանը, Հրայր Մանուկյանը, Կարպիս Փաշոյանը և Հայկ Ավետիքյանը, ովքեր պատրաստվում էին «Ոչ»-ի գրաֆիթիներ անել: Նրանց նկատմամբ արձանագրություն է կազմվել հասարակական վայրերը օգտագործելու կանոնները խախտելու հոդվածով[17]:	
Դեպք 4. Սեպտեմբերի 29-ի երեկոյան Մաշտոցի պուրակից ոստիկանության Կենտրոնականի բաժին է բերման ենթարկվել «Չե՛ք անցկացնի» շարժման մասնակից Վարդան Հարությունյանը, ով պուրակի տարածքում “Ոչ”-ի	

[13] Շահեն Հարությունյանը մարզադաշտում տեղի ունեցած միջադեպի եւ Ռուբեն Հայրապետյանի հետ զրույցի մասին, http://www.lragir.am/index/arm/0/right/view/120107

[14] Որդեկորույս ծնողները՝ Բաղրամյան պողոտայում. «Գնամ գույնզգույն շոր հագնեմ գամ, որ թողնե՞ք, անցնեմ», http://www.aravot.am/2015/07/02/589338/

[15] Գասպարին իր դռան առջև լցրած գոմաղբը Սերժ Սարգսյանի տուն է տեղափոխել, http://www.epress.am/2015/07/08/%D5%A3%D5%A1%D5%BD%D5%BA%D5%A1%D6%80%D5%AB%D5%B6-%D5%AF%D5%B8%D6%80%D5%A5%D5%AC-%D5%A7-%D5%AB%D6%80-%D5%A4%D5%BC%D5%A1%D5%B6-%D5%A1%D5%BC%D5%BB%D6%87-%D5%AC%D6%81%D6%80%D5%A1%D5%AE-%D5%A3%D5%B8%D5%B4.html

[16] Ոստիկանությունում բռնություն են կիրառել, ապա կաշառք պահանջել՝ քրեական պատասխանատվության չենթարկելու համար, http://www.ccc.am/hy/1428493746/3/4935

[17] «Չե՛ք անցկացնի»-ի չորս անդամներ բերման են ենթարկվել, http://www.azatutyun.am/content/article/27276671.html

գրաֆիթիներ էր փորձում նկարել: Նրա նկատմամբ վարչական իրավախախտման մասին արձանագրություն է կազմվել[18]:	
Անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքի խախտում (ներառյալ՝ հոգեբանական ճնշումներից, սպառնալիքներից զերծ մնալու իրավունքի խախտում)	**7**
• **քաղաքացուն հայհոյելը**	**1**
Դեպք 1. Օգոստոսի 10-ին ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Գյումրի քաղաքի Կումայրիի բաժնի աշխատակիցները քաղաքացուն ոստիկանության բաժին բերման ենթարկելիս հայհոյել են[19]:	
• **քաղաքացուն սպառնալը**	**2**
Դեպք 1. Օգոստոսի 14-ին սպորտային կազմվածքով երկու երիտասարդ տղամարդ հարվածել են Հիմնադիր խորհրդարանի և 100-ամյակն առանց ռեժիմի շարժման աջակից Սյուզի Գևորգյանին, ով Համահայկական խաղերին մասնակցող սփյուռքահայ երիտասարդների շրջանում քարոզչական աշխատանք էր իրականացրել, ապա սպառնացել են, որ եթե իրենց աչքին երևա, վատ կլինի: Աղջկա պնդմամբ իրեն սպառնացող անձինք եղել են քաղաքացիական հագուստով ոստիկաններ[20]:	
Դեպք 2. Օգոստոսի 25-ին ոստիկանության Սևանի բաժնի աշխատակիցը սպառնացել է քաղաքացուն՝ հայտնելով, որ եթե չպնդի հետաքննիչի մոտ նախկինում հայտնած տեղեկություններն այն մասին, թե, իբր, անձնական օգտագործման համար թմրամիջոց է ձեռք բերել, որից հյուրասիրելու եղանակով՝ ապօրինի իրացրել է մեկ այլ քաղաքացի, ապա կդատապարտվի, ինչի արդյունքում տվել է իրականությանը չհամապատասխանող ցուցմունք[21]:	
• **քաղաքացուն վիրավորանք հասցնելը**	**3**
Դեպք 1. Հուլիսի 26-ին ծառայողական պարտականություններն իրականացնելու ժամանակ վիճաբանություն է տեղի ունեցել պետավտոտեսուչի և նրա կողմից կանգնեցված վարորդի միջև, որի ժամանակ պետավտոտեսուչն ասել է. «28 հատ հարբած ոչխար ենք տարել բաժին»[22]:	
Դեպք 2. Օգոստոսի 3-ին Աբովյան քաղաքի մոտ ճանապարհային ոստիկանության ծառայողները կանգնեցրել են քաղաքացու վարած ավտոմեքենան և, պարզելով, որ նա մեքենան վարում է ոգելից խմիչքի ազդեցության տակ՝ այդ հանգամանքը չարձանագրելու համար նրանից պահանջել են կաշառք, սակայն քաղաքացին հրաժարվել է գումար տալ ոստիկաններին, այնուհետև հրաժարվել է նաև հարբածության աստիճանի	

[18] Կրկին բերման է ենթարկվել ակտիվիստ, http://www.a1plus.am/1408658.html

[19] Բռնությամբ զուգորդված պաշտոնական լիազորություններն անցնելու դեպքով հարուցվել է քրեական գործ, http://www.ccc.am/hy/1428493746/3/4965

[20] Ինչու Սյուզի Գեւորգյանը իրեն ծեծող ոստիկանների դեմ բողոք չի ներկայացնում, http://www.aravot.am/2015/08/22/601660/

[21] Խոշտանգման արդյունքում խոստովանել է չկատարած հանցագործությունը. հարուցվել է քրեական գործ, http://www.ccc.am/hy/1428493746/3/4971

[22] Պետավտոտեսուչ. «28 հատ հարբած ոչխար ենք տարել բաժին», http://www.aravot.am/2015/07/27/596308/

որոշման համար անհրաժեշտ զննումից, ինչի հետ կապված ոստիկանության աշխատակիցները վիրավորել են նրան[23]:	
Դեպք 3. Այն բանից հետո, երբ օգոստոսի 26-ին Նոյեմբերյանի բնակիչ Արտակ Ներսիսյանը հրաժարվել է հարբածության ստուգում անցնել և բերման է ենթարկվել ոստիկանության բաժին, այնտեղ նրան պետավտոտեսուչների դասակի հրամանատար Սմբատ Նորեկյանն ասել է. «Վեր ընկի տեղդ, կյանքներս կերար, մենք էլ, դու էլ ազատվենք այս խնդրից»[24]:	
• **քաղաքացուն անհիմն կերպով խմածության ստուգում անցնել ստիպելը**	**1**
Դեպք 1. Օգոստոսի 26-ին պետավոտեսուչները Նոյեմբերյանի բնակիչ Արտակ Ներսիսյանին մի քանի անգամ ստիպել են խմածության ստուգում անցնել, թեև նա տվյալ պահին մեքենայի ղեկին չի եղել[25]:	
Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքի խախտում	**3**
• **հանցագործության դեպքն անհետևանք թողնելը**	**1**
Դեպք 1. Հուլիսի 8-ին քաղաքացու բնակարանում կատարված գողության փորձից հետո ոստիկանության ծառայողները տեղեկացել են հանցագործության դեպքի մասին, սակայն դրան օրինական ընթացք չեն տվել, հանցագործության վերաբերյալ քաղաքացուց հաղորդում չեն ընդունել և համապատասխան արձանագրություն չեն կազմել[26]:	
• **հանցագործության դեպքը չգրանցելը**	**1**
Դեպք 1. Հուլիսի 10-ին «Հայրենիք» կինոթատրոնի հարևանությամբ գտնվող բակերից մեկում երեք անհայտ անձինք զինված հարձակում են գործել մոտակայքում գործող տարադրամի փոխանակման կետի երկու աշխատակիցների վրա, սակայն հանցագործությունն ավարտին չեն հասցրել, քանի որ բակում գտնվող բնակիչները օգնության են հասել հարձակման ենթարկվածներին: Դեպքի վայր են ժամանել ոստիկանները, սակայն ավելի ուշ armtimes.am-ը պարզել է, որ դեպքը ոստիկանության օպերատիվ ամփոփագրերում գրանցված չէ[27]:	
• **հանցագործության վայր ուշացումով ժամանելը**	**1**
Դեպք 1. Օգոստոսի 8-ին «Էյր Արմենիա» ավիաընկերության սեփականատեր և տնօրեն Արսեն Ավետիսյանին ՀՖՖ նախագահ Ռուբեն Հայրապետյանի	

[23] Ըստ քաղաքացու հաղորդման՝ ոստիկանության աշխատակիցները հանցագործության դեպքը թողել են անհետևանք, http://www.ccc.am/hy/1428493746/3/4930

[24] Նոյեմբերյանցի վարորդը պետավտոտեսուչներից բողոքել է գլխավոր դատախազին, http://www.aravot.am/2015/09/04/605899/

[25] Նոյեմբերյանցի վարորդը պետավտոտեսուչներից բողոքել է գլխավոր դատախազին, http://www.aravot.am/2015/09/04/605899/

[26] Ըստ քաղաքացու հաղորդման՝ ոստիկանության աշխատակիցները հանցագործության դեպքը թողել են անհետևանք, http://www.ccc.am/hy/1428493746/3/4918

[27] Ոստիկանությունը չի արձանագրել երեկ Շենգավիթի ոստիկանության մերձակայքում տեղի ունեցած ավազակային հարձակման դեպքը, http://armtimes.com/hy/read/66913

թիկնապահների կողմից ծեծի ենթարկելու մասին ահազանգ ստանալուց հետո ոստիկանությունը 3 ժամ ուշացով է ժամանել դեպքի վայր[28]:	
Լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն իրականացնելու իրավունքի խախտում	**1**
• **ԶԼՄ-ից տեղեկատվության աղբյուր պահանջելը**	**1**
Դեպք 1. Ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնի պետը գրությամբ «Ժողովուրդ» օրաթերթից պահանջել է բացահայտել «Կեղծ շենգենից մինչև ՀԴՄ կտրոն, ինչ է թաքցնում ֆինանսների նախարարությունը» հոդվածի տեղեկատվության աղբյուրը՝ հղում կատարելով 2004թ.-ից չգործող «Մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածին, մինչդեռ ներկայումս գործող «Զանգվածային լրատվության մասին» օրենքում չկա դրույթ, որը իրավապահներին իրավունք է տալիս լրատվամիջոցից տեղեկատվության աղբյուր պահանջել[29]:	
Կարծիքն ազատորեն արտահայտելու իրավունքի խախտում, Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի խախտում	**1**
• **ազատ արտահայտմանը խոչընդոտելու նպատակով անձին հետևելը**	**1**
Դեպք 1. Ոստիկանները մշտապես հետևել են Հիմնադիր խորհրդարանին և 100-ամյակն առանց ռեժիմի շարժման աջակից Սյուզի Գևորգյանին, ով Համահայկական խաղերին մասնակցող սփյուռքահայ երիտասարդների շրջանում քարոզչություն էր իրականացնում և պարբերաբար փորձել են խոչընդոտել նրան[30]:	
Սեփականության իրավունքի խախտում	**1**
• **առանց որևէ բացատրություն տալու վարորդների մեքենաները տուգանային հրապարակ տեղափոխելը**	**1**
Դեպք 1. Օգոստոսի 4-ի երեկոյան ԳԱԼԱ հեռուստաընկերությունը Գյումրու բնակիչներից ահազանգեր է ստացել այն մասին, որ ճանապարհային ոստիկանները քաղաքի տարբեր հատվածներում վարորդներին կանգնեցրել են և առանց որևէ բացատրություն ներկայացնելու մեքենաները տեղափոխել են տուգանային հրապարակ: Վարորդների մեծ մասը պնդում էր, թե իրենք որևէ խախտում թույլ չէին տվել[31]:	
Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունքի խախտում	**11**
• **քաղաքացու նկատմամբ բռնություն կիրառելը**	**10**
Դեպք 1. Հուլիսի 17-ին ՀՀ ոստիկանության բաժին բերման ենթարկված քաղաքացին հայտնել է, որ վիճաբանության կասկածանքով ոստիկանության բաժին բերման ենթարկվելուց հետո ոստիկանության աշխատակիցները բռնություն են կիրառել իր նկատմամբ[32]:	

[28] Աշխատեք ձեզ չառնանգեն, երբ ՀՀ ոստիկանապետը արձակուրդում է կամ զբաղված, http://armtimes.com/hy/read/69497

[29] Ոստիկանության Արաբկիրի բաժնում հղում են անում օրենքի, որը վաղուց գոյություն չունի. «Ժողովուրդ», http://www.1in.am/1721468.html

[30] Հետապնդել և ահաբեկել են թռուցիկներ բաժանած երիտասարդ աղջնակին, http://www.aravot.am/2015/08/15/600258/

[31] Ի՞նչ ստուգումներ են Գյումրիում եւ ինչու՞ է ոստիկանությունը մի քանի տասնյակ մեքենա տեղափոխել տուգանային հրապարակ. ահազանգում են վարորդները, http://galatv.am/hy/news/119064/

[32] Բռնության գործադրմամբ պաշտոնական լիազորություններն անցնելու և խուլիգանության դեպքերով հարուցվել է քրեական գործ, http://www.ccc.am/hy/1428493746/3/4916

Դեպք 2. Հուլիսի 20-ին ոստիկանության ծառայողը քաղաքացու նկատմամբ բռնություն է կիրառել՝ ստիպելով ընդունել չբացահայտված անասնագողություններ[33]:	
Դեպք 3. Օգոստոսի 3-ին Աբովյան քաղաքի մոտ ճանապարհային ոստիկանության ծառայողները կանգնեցրել են քաղաքացու վարած ավտոմեքենան և, պարզելով, որ նա մեքենան վարում է ոգելից խմիչքի ազդեցության տակ՝ այդ հանգամանքը չարձանագրելու համար նրանից պահանջել են կաշառք, սակայն քաղաքացին հրաժարվել է գումար տալ ոստիկաններին, այնուհետև հրաժարվել է նաև հարբածության աստիճանի որոշման համար անհրաժեշտ զննումից, ինչի կապակցությամբ ոստիկանության նույն աշխատակիցները բռնություն են կիրառել նրա նկատմամբ՝ պատճառելով մարմնական վնասվածքներ[34]:	
Դեպք 4. Օգոստոսի 10-ին ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Գյումրի քաղաքի Կումայրիի բաժնի աշխատակիցները քաղաքացուն ոստիկանության բաժին բերման ենթարկելիս նրա նկատմամբ բռնություն են գործադրել[35]:	
Դեպք 5. Օգոստոսի 11-ին քաղաքացին վիճաբանության է բռնվել «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոնում ծառայություն իրականացնող ոստիկանության աշխատակցի հետ, որից հետո խուլիգանություն կատարելու կասկածանքով բերման է ենթարկվել ոստիկանության Շենգավիթի բաժին: Բերման ենթարկվելու ընթացքում՝ ավտոմեքենայի մեջ, ոստիկանության ծառայողները ձեռքերով հարվածներ են հասցրել գլխին՝ պատճառելով ֆիզիկական ուժեղ ցավ[36]:	
Դեպք 6. Օգոստոսի 14-ին սպորտային կազմվածքով երկու երիտասարդ տղամարդ ծեծի են ենթարկել Հիմնադիր խորհրդարանին և 100-ամյակն առանց ռեժիմի շարժման աջակից Սյուզի Գևորգյանին, ով Համահայկական խաղերին մասնակցող սփյուռքահայ երիտասարդների շրջանում քարոզչական աշխատանք էր իրականացրել: Աղջկա պնդմամբ իրեն հարվածող անձինք եղել են քաղաքացիական հագուստով ոստիկաններ[37]:	
Դեպք 7. Օգոստոսի 25-ին մոր ահազանգի կապակցությամբ իրենց տուն ժամանած ՀՀ ոստիկանության Էրեբունու բաժնի աշխատակիցները խոշտանգել են քաղաքացուն՝ պատճառելով ֆիզիկական ուժեղ ցավ[38]:	
Դեպք 8. Օգոստոսի 25-ին ոստիկանության Սևանի բաժնի աշխատակիցը բռունցքներով հարվածներ է հասցրել քաղաքացու կրծքավանդակին, քաշքշել և հրել է՝ նրան հարկադրելով հետաքննիչի մոտ նախկինում տված բացատրությանը նույնաբովանդակ ցուցմունքներ տալ այն մասին, թե, իբր,	

[33] Ոստիկանությունում բռնություն են կիրառել, ապա կաշառք պահանջել՝ քրեական պատասխանատվության չենթարկելու համար, http://www.ccc.am/hy/1428493746/3/4935

[34] Ըստ քաղաքացու հաղորդման՝ ոստիկանության աշխատակիցները հանցագործության դեպքը թողել են անհետևանք, http://www.ccc.am/hy/1428493746/3/4930

[35] Բռնությամբ զուգորդված պաշտոնական լիազորություններն անցնելու դեպքով հարուցվել է քրեական գործ, http://www.ccc.am/hy/1428493746/3/4965

[36] Ոստիկանության բաժին բերման ենթարկելիս խոշտանգել են, http://www.ccc.am/hy/1428493746/3/4956

[37] Ինչու Սյուզի Գեւորգյանը իրեն ծեծող ոստիկանների դեմ բողոք չի ներկայացնում, http://www.aravot.am/2015/08/22/601660/,

[38] Խոշտանգման դեպքով հարուցվել է քրեական գործ, http://www.ccc.am/hy/1428493746/3/4972

անձնական օգտագործման համար թմրամիջոց է ձեռք բերել, որից հյուրասիրելու եղանակով ապօրինի իրացրել է մեկ այլ քաղաքացի[39]:	
Դեպք 9. Օգոստոսի 26-ին պետավտոտեսուչների դասակի հրամանատար Սմբատ Նորեկյանը և պետավտոտեսուչ Վահե Գալստյանը քաղաքացի Արտակ Ներսիսյանի նկատմամբ ուժ կիրառելով, նրան ֆիզիկական ցավ և մարմնական վնասվածքներ պատճառելով տարել են ոստիկանության Նոյեմբերյանի բաժին[40]:	
Դեպք 10. Սեպտեմբերի 3-ին քաղաքացուն բերման ենթարկող ոստիկանության աշխատակիցները բռնություն են գործադրել նրա նկատմամբ, որի ընթացքում հրել և հարվածներ են հասցրել մարմնի տարբեր մասերին՝ պատճառելով մարմնական վնասվածքներ և ֆիզիկական ուժեղ ցավ[41]:	
• **քաղաքացուն հրելը**	**1**
Դեպք 1. Սեպտեմբերի 7-ին քաղաքացիական հագուստով ոստիկանները Երևանի Վազգեն Սարգսյանի անվան «Հանրապետական» մարզադաշտում տեղի ունեցած Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարի Հայաստան – Դանիա հանդիպման վերջում քաղբանտարկյալ Շանթ Հարությունյանի որդի Շահեն Հարությունյանին հրել են աստիճաններից, որի արդյունքում նա ստացել է ոտնաթաթի 2-րդ աստիճանի սալջարդ[42]:	
Ընդամենը	**30**

[39] Խոշտանգման արդյունքում խոստովանել է չկատարած հանցագործությունը. հարուցվել է քրեական գործ, http://www.ccc.am/hy/1428493746/3/4971

[40] Նոյեմբերյանցի վարորդը պետավտոտեսուչներից բողոքել է գլխավոր դատախազին, http://www.aravot.am/2015/09/04/605899/

[41] Ոստիկանները բռնություն են գործադրել՝ անցնելով պաշտոնական լիազորությունները. հարուցվել է քրեական գործ, http://www.ccc.am/hy/1428493746/3/4977

[42] Շահեն Հարությունյանին մարմնական վնասվածք հասցնելու դեպքով քրեական գործի հարուցումը մերժվել, http://armtimes.com/hy/read/70341

2015 թ. 3-րդ եռամսյակի ընթացքում հավաքների ժամանակ ոստիկանության կողմից մարդու իրավունքի խախտման դեպքերի ընդհանուր տվյալներ

Հավաքների ժամանակ հաշվետու ժամանակահատվածում տեղի է ունեցել մարդու իրավունքների խախտման 42 դեպք, որոնցից 8-ի դեպքում խախտվել է անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը, 7-ի դեպքում անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքը (ներառյալ՝ հոգեբանական ճնշումներից, սպառնալիքներից զերծ մնալու իրավունքը), 1-ի դեպքում՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, 2-ի դեպքում՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը, 1-ի դեպքում՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը և արդար դատաքննության իրավունքը, 17-ի դեպքում՝ խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունքը, 1-ի դեպքում՝ խտրականությունից զերծ մնալու իրավունքը, 1-ի դեպքում՝ կարծիքն ազատորեն արտահայտելու իրավունքը և խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունքը, 4-ի դեպքում՝ Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունքը:

Հավաքների ժամանակ մարդու իրավունքների խախտման բոլոր դեպքերը գրանցվել են Երևանում:

Հավաքների ժամանակ գրանցված դեպքերից 1-ի դեպքում խախտվել է 2 հոգու իրավունք, 1-ի դեպքում՝ 8 հոգու իրավունք, 1-ի դեպքում՝ 46 հոգու իրավունք, 1-ի դեպքում՝ 48 հոգու իրավունք, 1-ի դեպքում՝ մոտ 20 հոգու իրավունք, 1-ի դեպքում՝ մոտ 100 հոգու իրավունք, 1-ի դեպքում՝ մոտ 200 հոգու իրավունք, 2-ի դեպքում՝ 4 հոգու իրավունք, 2-ի դեպքում մոտ 5 հոգու իրավունք, 2-ի դեպքում՝ մոտ 50 հոգու իրավունք, 3-ի դեպքում՝ 3 հոգու իրավունք, 3-ի դեպքում՝ մոտ 10 հոգու իրավունք, 3-ի դեպքում՝ մի քանի տասնյակ հոգու իրավունք, 14-ի դեպքում՝ 1 հոգու իրավունք, 6-ի դեպքում հայտնի չէ, թե քանի հոգու իրավունք է խախտվել:

Հաշվետու ժամանակահատվածում հավաքների ժամանակ գրանցված դեպքերի հակիրճ նկարագրություններ՝ ըստ խախտված իրավունքի և ոստիկանության գործողության տեսակի (կամ անգործության)

	Դեպքերի թիվ
Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի խախտում	8

• **բերման ենթարկելը**	**8**
Դեպք 1. Հուլիսի 6-ին Բաղրամյան պողոտայում էլեկտրաէներգիայի թանկացման դեմ ընթացող նստացույցը ցրելուց հետո 46 հոգի տարվել է ոստիկանության բաժիններ: Նրանցից 6-ը անչափահաս էին[43]:	
Դեպք 2. Հուլիսի 6-ին Թումանյան-Մաշտոց խաչմերուկից բերման է ենթարկվել Վարդգես Գասպարին, որը ոստիկաններից պահանջում էր բացել Ազատության հրապարակը և այնտեղ գտնվող քաղաքացիներին թույլ տալ երթ իրականացնել: Ակտիվիստը գոռում էր. «Լակոտ, թափթփուկ, բացիր ճանապարհս»: Ոստիկանությունից հայտնել են, որ Գասպարիին բերման են ենթարկել վարչական օրենսգրքի 172.3 (ոստիկանին վիրավորելը) և 182 (ոստիկանի օրինական պահանջը չկատարելը) հոդվածների համաձայն: Հաջորդ օրը ակտիվիստը հայտնել է, որ իրեն առանց որևէ պահանջ ներկայացնելու կամ բացատրություն տալու են բերման ենթարկել և մի քանի ժամ ոստիկանությունում պահելուց ու արձանագրություն կազմելուց հետո, ակտիվիստի խոսքերով, իրեն թողել են «ստադիոնի, այսպես ասած՝ քրջի բազարի աղբանոցում»[44]:	
Դեպք 3. Օգոստոսի 20-ին՝ Հիմնադիր խորհրդարանի համակիր Սյուզի Գևորգյանին ծեծի ենթարկելու միջադեպը դատապարտող բողոքի ակցիայի ժամանակ, Հիմնադիր խորհրդարանի անդամ Գևորգ Սաֆարյանը կոշտ ելույթ ունեցավ նախագահական նստավայրի առաջ և ձվեր շպրտեց նստավայրի ուղղությամբ, որից հետո նրան ոստիկանները բերման ենթարկեցին Արաբկիրի բաժին[45]:	
Դեպք 4. Օգոստոսի 21-ին «Ոտքի՛, Հայաստան» նախաձեռնության ակտիվիստները փորձեցին անցնել Հանրապետության հրապարակի կենտրոն, սակայն ոստիկանները 4 հոգու բերման ենթարկեցին[46]:	
Դեպք 5. Օգոստոսի 21-ին, երբ ոստիկանները խլում էին «Ոտքի Հայաստան» նախաձեռնության անդամների՝ հավաքի վայր բերված անվադողերը, ցուցարարները փորձեցին դիմադրություն ցույց տալ, սակայն ոստիկանները բերման ենթարկեցին Անդրիաս Ղուկասյանին, Սերգեյ Կյուրեղյանին և Անդրանիկ Մարտիրոսյանին[47]:	

[43] Բաղրամյանից 46 քաղաքացու են տարել ոստիկանություն. Վստահեցնում են, որ շատ շուտ ազատ կարձակվեն, http://galatv.am/hy/news/46/

[44] Վարդգես Գասպարի. «Ոստիկանության բաժնից հանեցին, տարան, դրեցին աղբանոցում». «Ազատություն» ռ/կ, http://www.aravot.am/2015/07/07/591170/

[45] Բաղրամյան 26-ի վրա ձու ջարդելու համար Հիմնադիր խորհրդարանի անդամին ոստիկանները տարան բաժին, http://www.aravot.am/2015/08/20/601309/

[46] Լարված իրավիճակ Հանրապետության հրապարակում, http://www.aravot.am/2015/08/21/601814/

[47] Ակտիվիստներին բերման ենթարկեցին, http://www.a1plus.am/1401904.html

Դեպք 6. Սեպտեմբերի 1-ին Հանրապետության հրապարակից ոստիկանության Կենտրոնականի բաժին բերման են ենթարկվել «Ոտքի՛, Հայաստան» նախաձեռնության 8 անդամներ՝ այդ թվում համակարգող խորհրդի անդամներ Անդրիաս Ղուկասյանն ու Դավիթ Հովհաննիսյանը, ովքեր ցանկանում էին հրապարակի «գորգի» վրա ակցիա իրականացնել[48]:	
Դեպք 7. Սեպտեմբերի 1-ին ոստիկանների և էլեկտրաէներգիայի դեմ պայքարող ցուցարարների միջև սկսված բախումներից հետո բերման է ենթարկվել ակցիայի 4 մասնակից՝ Արտուշ Չիբուխչյանը, Մաքսիմ Սարգսյանը, Վահրամ Պետրոսյանը և 17-ամյա Տիգրան Խաչատրյանը[49]:	
Դեպք 8. Սեպտեմբերի 12-ի առավոտյան ժամը 5-ին Բաղրամյան պողոտայում ցուցարարներին օդակի մեջ առնելուց հետո ոստիկանները 48 հոգու բերման ենթարկեցին: Նրանց նկատմամբ կազմվել են վարչական արձանագրություններ Վարչական իրավավախախտումների մասին օրենսգրքի 182 հոդվածի համաձայն[50]:	
Անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքի խախտում (ներառյալ՝ հոգեբանական ճնշումներից, սպառնալիքներից զերծ մնալու իրավունքի խախտում)	**7**
• **ցուցարարին հայհոյելը և սպառնալը**	**1**
Դեպք 1. Օգոստոսի 20-ին Արաբկիրի բաժին բերման ենթարկվելուց հետո Ոստիկանության Երևան քաղաքի վարչության պետ Աշոտ Կարապետյանն իր հետ ունեցած հեռախոսային խոսակցության ժամանակ սեռական բնույթի հայհոյանքներ է տվել Հիմնադիր խորհրդարանի անդամ Գևորգ Սաֆարյանին և սպառնացել է սպանել նրան: Աշոտ Կարապետյանի հետ խոսակցության ավարտից հետո ակտիվիստին հայհոյել և սպառնացել է նաև որպես պետ ներկայացած քաղաքացիական հագուստով մի անձնավորություն[51]:	
• **ցուցարարին սպառնալը**	**1**
Դեպք 1. Ազատության հրապարակում հացադուլ իրականացնող Դավիթ Սանասարյանը հայտարարել է, որ ոստիկաններն ու թաղային հեղինակությունները ցուցարարներին սպառնացել են՝ արգելելով մասնակցել Ազատության հրապարակի ցույցին: Դեպքի կապակցությամբ Երևանի ոստիկանապետ Աշոտ Կարապետյանն ասել է. «Սպառնալիքով կարանք հաղորդումներ ընդունել և այլն, բայց չեմ կարծում, որ նման բան եղել է. եթե կա, թող դիմեն: Ինչ վերաբերում է ոստիկաններին, ոստիկանությունը իրա գործառույթով է զբաղված, իրանց վերաբերյալ ասածն էլ անհեթեթություն եմ համարում»[52]:	

[48] «Ոտքի, Հայաստան»-ը փորձում է փակել Հանրապետության հրապարակին հարակից փողոցները, http://armtimes.com/hy/read/69432

[49] Վարչական բերման է ենթարկվել 4 քաղաքացի. Ոստիկանություն, http://armtimes.com/hy/read/69430

[50] Բաղրամյան պողոտայից բերման ենթարկված բոլոր ակտիվիստներն արդեն ազատ են արձակվել, http://www.lragir.am/index/arm/0/country/view/120312

[51] Հիմնադիր խորհրդարան. «Երևանի ոստիկանապետը հայհոյել և սպառնացել է Գևորգ Սաֆարյանին», http://www.aravot.am/2015/08/20/601463/

[52] Սպառնալիքով կարանք հաղորդումներ ընդունել. Երևանի ոստիկանապետի արձագանքը Դավիթ Սանասարյանի ահազանգին, http://www.1in.am/1667387.html

• **ցուցարարին վիրավորելը**	**4**
Դեպք 1. Հուլիսի 14-ին «Ոչ թալանին» նախաձեռնության երթի մասնակիցներից մեկի ձեռքին տեսնելով իր լուսանկարով, «պատժել Օսիպյանին» գրությամբ պաստառը՝ Երևանի փոխոստիկանապետ Վալերի Օսիպյանը ցուցարարներին ասաց. «Դուք արդեն լկտիացել եք, ես հիմա կհրավիրեմ լրացուցիչ ուժեր»[53]:	
Դեպք 2. Հուլիսի 28-ին Հանրապետության հրապարակում նստացույց իրականացնող «Ոտքի՛ Հայաստան» նախաձեռնության անդամ Դավիթ Սանասարյանը հայտարարել է, որ ոստիկաններից մեկն իրեն անվանել է «կլոուն»[54]:	
Դեպք 3. Հուլիսի 29-ին Հանրապետության հրապարակում «Ոտքի, Հայաստանը» նախաձեռնության նստացույցի ժամանակ ոստիկանության փոխգնդապետ Կարեն Մովսիսյանը ցուցարարներից մեկին խեղկատակ անվանեց, իսկ նրա գործողությունները՝ խեղկատակային[55]:	
Դեպք 4. Սեպտեմբերի 12-ին ոստիկանության «Հրեշտակների» 4-րդ գումարտակի ծառայող Գեղամ Խաչատրյանն իր Ֆեյսբուքյան էջում արել է հետևյալ գրառումը. «Խոսքս վերաբերվում է այն անբարոյականներին, ովքեր հայհոյում են ոստիկանների մայրերին, ընտանիքի անդամներին: Սա իմ անձնական կարծիքն է, թող ներեն ինձ կանայք, ովքեր կարդում են իմ այս գրածը: Գևորգ ՍԱՖԱՐՈՎ, շուշանիկ ՎԱՂԻՆԱԿՅԱՆ և մնացած բոլոր անբարոյականների և վիժվածքների զավակներ մի հատ ձեզ նայեք, ձեր ընտանիքներին ու ձեր կողքիններին կտեսնեք, որ դուք եք արժանի այդ հայհոյանքներին: Վիժվածքների նման թափել եք փողոց պրոպագանդելով հայրենասիրություն և ազատություն: Ոնց կարող է հայրենասեր մարդը հայհոյի ՀԱՅՐԵՆԻՔԻ ծառայողներին և իր պաշտպաններին??? Նորից եմ կրկնում սա իմ անձնական կարծիքն»[56]:	
• **ցուցարարների բնակարաններ այցելելը**	**1**
Դեպք 1. Ըստ armtimes.am-ի՝ հուլիսի սկզբին քաղաքացիական հագուստով ոստիկաններ, օպեր-լիազորներ այցելել են 100-ից ավելի երիտասարդների բնակարաններ, ովքեր մասնակցել էին electric yerevan շարժմանը: Այցերը եղել են տարբեր պատրվակներով: Երբեմն ներկայացել են որպես նոր թաղային, որոշ դեպքերում գիշերային ծեծկռտուքի պատրվակով են այցելել կամ ասել են, թե ակտիվիստը ինչ-որ մեկին երաշխավոր է կանգնել ու եկել են տեսնեն, որ չի փախել: Եղել է դեպք, երբ ընտանիքի անդամներին սպառնալիքներով հորդորել են երիտասարդներին թույլ չտալ մասնակցել ցույցերին[57]:	
Իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի խախտում	**1**
• **փաստաբանի գործունեությունը խոչընդոտելը**	**1**

[53] Դուք արդեն լկտիացել եք. Վալերի Օսիպյանը՝ ցուցարարներին, http://www.1in.am/1671412.html
[54] Դավիթ Սանասարյանը մի քանի անգամ ճեղքել է ոստիկանության պատը, http://www.aravot.am/2015/07/28/596867/
[55] Կարեն Մովսիսյանը ցուցարարներին խեղկատակ անվանեց, http://www.aravot.am/2015/07/29/597250/
[56] Խնդրում են կարգապահական վարույթ հարուցել «Հրեշտակների» 4-րդ գումարտակի ծառայող Գեղամ Խաչատրյանի նկատմամբ, http://www.aravot.am/2015/09/19/610557/
[57] Ոստիկանությունը ակտիվիստների տներով է շրջում, http://armtimes.com/hy/read/66772

Դեպք 1. Հուլիսի 6-ին փաստաբան Արամազդ Կիվիրյանին ոստիկանության Կենտրոնականի բաժանմունքում որոշ ժամանակ թույլ չէին տալիս բարձրանալ Բաղրամյան պողոտայից բերման ենթարկված Արգիշտի Կիվիրյանի մոտ՝ նրան զրկելով իրավաբանական օգնություն ստանալու հնարավորությունից: «Ոչ մի պատճառաբանություն չկա, իբր խորհրդատուն պետք է որոշի՝ ես պետք է բարձրանամ իմ վստահորդի մոտ, թե ոչ: Այսինքն՝ փաստացի ստացվում է մի իրավիճակ, որ փաստաբանը չի կարողանում իրավաբանական օգնություն ցույց տալ իր վստահորդին, որովհետև ոստիկանությունը ինչ-որ կամայականություններ է կատարում, իր ցանկություններն է այսպես ասած՝ բրդում առաջ»,- լրագրողների հետ զրույցում ասել է փաստաբանը[58]:	
Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքի խախտում	**2**
• **անգործություն (իրավախախտում կատարած քաղաքացու նկատմամբ որևէ գործողություն չձեռնարկելը)**	**1**
Դեպք 1. Հանրապետության հրապարակում հուլիսի 29-ի գիշերը անհայտ անձը հայհոյել է «Ոտքի՛, Հայաստան» քաղաքացիական շարժման՝ նստացույց իրականացնող քաղաքացիներին: Շարժման անդամ Անդրիաս Ղուկասյանի խոսքով միջադեպը տեղի է ունեցել ոստիկանների աչքի առջև, սակայն նրանք որևէ քայլ չեն ձեռնարկել[59]:	
• **ուշացումով դեպքի վայր ժամանելը**	**1**
Դեպք 1. Սեպտեմբերի 21-ին Երևանի կենտրոնում ծեծի է ենթարկվել ազատամարտիկ Սմբատ Հակոբյանը, ով դեպքից րոպեներ առաջ մասնակցում էր «Հայազն» կուսակցության հակաիշխանական երթին: Ըստ ականատես ակտիվիստների՝ ոստիկանությունը դեպքի վայր է ժամանել միջադեպից 30-40 րոպե անց՝ նրանց կողմից փողոցը փակելուց հետո, սակայն «Առաջին լրատվական»-ի հետ զրույցում Երևանի ոստիկանապետ Աշոտ Կարապետյանի պնդել է, որ ոստիկանությունը դեպքի վայր է ժամանել ահանգանգ ստանալուց 3 րոպե անց[60]:	
Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքի խախտում, Արդար դատաքննության իրավունքի խախտում	**1**
• **լրագրողին գործարք առաջարկելը**	**1**

[58] Արամազդ Կիվիրյանին թույլ չէին տվել բարձրանալ Արգիշտի Կիվիրյանի մոտ, http://www.aravot.am/2015/07/06/590555/

[59] Հանրապետության հրապարակում հայհոյել են ոստիկանությանը, հայ ժողովրդին. Անդրիաս Ղուկասյան, http://www.aravot.am/2015/07/29/597109/

[60] «Պարտավորված ենք բացահայտել». Երևանի ոստիկանապետը՝ ազատամարտիկին ծեծի ենթարկելու մասին, http://www.1in.am/1726763.html

Դեպք 1. «Իլուր» լրատվական կայքի լրագրող Հակոբ Կարապետյանին հուլիսի 7-ին հրավիրել են ոստիկանության ներքին անվտանգության վարչություն՝ հունիսի 23-ի դեպքերի հետ կապված իր ներկայացրած հանցագործության մասին հաղորդման վերաբերյալ բացատրություն տալու, սակայն վարչությունում նրան առաջարկել են իր կրած վնասի դիմաց փոխհատուցում տալ՝ պայմանով, որ նա գրի, որ ոստիկանության դեմ բողոք չգրի[61]:	
Խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունքի խախտում	**17**
• **հավաքը խոչընդոտելը**	**15**
Դեպք 1. Հուլիսի 6-ի երեկոյան Ազատության հրապարակում 100-ը չգերազանցող թվով ցուցարարներ ցանկանում էին Մաշտոցի պողոտա, Ամիրյան փողոց, Նալբանդյան փողոց, Թումանյան փողոց, Ազատության հրապարակ երթուղով երթ իրականացնել, սակայն ոստիկանները փակեցին նրանց ճանապարհը՝ հայտարարելով, թե երթն անօրինական է: Երևանի փոխոստիկանապետ Վալերի Օսիպյանը վկայակոչում էր Հավաքների ազատության մասին օրենքի 29-րդ հոդվածը՝ նշելով, որ ըստ այդ հոդվածի՝ 22:00-08:00 ընկած հատվածում հավաքներ և երթեր չի կարելի իրականացնել, մինչդեռ այդ հոդվածը սահմանում է, որ օրվա որոշակի ժամերին (22:00-08:00) բնակելի շինություններին, հիվանդանոցներին, գիշերօթիկ դպրոցներին և գիշերելու համար նախատեսված այլ շենքերին հարող տարածքներում անցկացվող հավաքները չեն կարող զուգորդվել անձանց հանգիստը խանգարող աղմուկով կամ լուսային ազդանշաններով[62]:	
Դեպք 2. Հուլիսի 14-ին «Ոչ թալանին» նախաձեռնության երթի մասնակիցները նստացույց իրականացրեցին Ամիրյան և Մաշտոց փողոցների խաչմերուկում, որի ժամանակ ոստիկանները ցուցարարներին հորդորում էին բացել փողոցը: Մոտ 20 րոպե անց ցուցարարները շարունակեցին երթը, սակայն Հանրապետության հրապարակում կրկին նստացույց սկսեցին, իսկ Երևանի փոխոստիկանապետ Վալերի Օսիպյանը կոչ արեց դադարեցնել նստացույցը՝ սպառնալով այլապես բոլորին բերման ենթարկել[63]:	
Դեպք 3. «Ոտքի՛, Հայաստան» նախաձեռնությունը նախատեսել էր հուլիսի 27-ից սկսած Հանրապետության հրապարակի կենտրոնում նստացույց իրականացրել, սակայն ոստիկանները թույլ չեն տվել նստացույցն անցկացնել հրապարակի «գորգի» վրա՝ հայտարարելով, որ ակցիան անօրինական է, և հրապարակի կենտրոնական հատվածը հանդիսանում է մշակութային արժեք ունեցող տարածք[64]:	

[61] Լևոն Երանոսյանն ու Հունան Պողոսյանը կհարցաքննվեն, http://politik.am/%D5%AC%D6%87%D5%B8%D5%B6-%D5%A5%D6%80%D5%A1%D5%B6%D5%B8%D5%BD%D5%B5%D5%A1%D5%B6%D5%B6-%D5%B8%D6%82-%D5%B0%D5%B8%D6%82%D5%B6%D5%A1%D5%B6-%D5%BA%D5%B8%D5%B2%D5%B8%D5%BD%D5%B5%D5%A1%D5%B6%D5%A8-%D5%AF/

[62] Ոստիկանները փակել են ցուցարարների ճանապարհը, http://www.aravot.am/2015/07/06/590804/

[63] «Եթե ես մեղավոր եմ, թող ինձ պատժեն». Վալերի Օսիպյան, http://168.am/2015/07/14/516101.html

[64] «Ոտքի Հայաստան»-ը ոստիկանությանը 30 րոպե ժամանակ է տալիս, http://www.aravot.am/2015/07/27/596444/

Դեպք 4. Հուլիսի 27-ին «Ոտքի՛, Հայաստան» նախաձեռնության համակարգող Դավիթ Սանասարյանը եւ «Հակահարված» խմբի երկու անդամներ ճեղքեցին ոստիկանական շղթան և նստեցին Հանրապետության հրապարակի «գորգի» վրա, սակայն ոստիկանները, նրանց ձեռքերից և ոտքերից բռնելով, տեղափոխեցին Կառավարության շենքի դիմացի մայթ[65]:	
Դեպք 5. Հուլիսի 29-ին Էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացման դեմ պայքարող «Ոտքի՛, Հայաստան» նախաձեռնության անդամները ակցիա էին իրականացնում Վազգեն Սարգսյան փողոցում՝ կանաչ լույսի ժամանակ փողոցում նստելով, սակայն ոստիկանները նրանց գրկելով ու հրմշտելով տանում էին մայթեր: Իսկ երբ նախաձեռնության անդամներից Դավիթ Սանասարյանը նստեց ՀՀԿ կենտրոնական գրասենյակի աստիճանների վրա, ոստիկանները նրան հեռացրեցին[66]:	
Դեպք 6. Հուլիսի 29-ին Հանրապետության հրապարակում տեղի ունեցող նստացույցի ժամանակ «Ոտքի՛, Հայաստանը» նախաձեռնության անդամներից երկուսը ճեղքեցին ոստիկանական շղթան և նստեցին Հանրապետության հրապարակի գորգին, սակայն ոստիկանները, նրանց ձեռքերից և ոտքերից բռնալով, տեղափոխեցին մայթ[67]:	
Դեպք 7. Հուլիսի 30-ին «Նաիրիտ» գործարանի աշխատակիցներն իրենց աշխատավարձերի վճարման պահանջով բողոքի ակցիա էին անցկացնում Կառավարության շենքի մոտ, որի շրջանակներում նրանք փակեցին Տիգրան Մեծ փողոցը, սակայն ոստիկանությունը նրանց հեռացրեց փողոցից[68]:	
Դեպք 8. Հուլիսի 30-ին «Ոտքի՛, Հայաստան» նախաձեռնության ակցիայի ժամանակ ոստիկանությունն ակտիվիստներին թույլ չտվեց նստել Կառավարության շենքի աստիճաններին՝ պատճառաբանելով, թե այնտեղ նստելն անօրինական է[69]:	
Դեպք 9. Հուլիսի 30-ին Հանրապետության հրապարակում նստացույց իրականացնող «Ոտքի՛, Հայաստան» նախաձեռնության համակարգող խմբի անդամ Դավիթ Սանասարյանը, ճեղքելով ոստիկանական պատը, հասավ Հանրապետության հրապարակի «գորգին», սակայն ոստիկանները նրան հեռացրեցին այդտեղից[70]:	
Դեպք 10. Օգոստոսի 14-ին ոստիկանները հեռացրել են հրապարակի կենտրոնում կանգնեցված կենդանի պատը, որից հետո «Ոտքի Հայաստան» նախաձեռնության ցուցարարները փորձել են տեղափոխվել հրապարակի	

[65] Ցուցարարները ճեղքեցին ոստիկանական շղթան, http://www.aravot.am/2015/07/27/596496/

[66] «Ոտքի՛, Հայաստան»-ը փակում էր Վազգեն Սարգսյան փողոցը. նրանք սպասում են կառավարության վաղվա նիստին, http://armtimes.com/hy/read/67886

[67] «Դուք մեր ծառաներն եք, ինչ իրավունքով եք մեզ հարվածում». քաղաքացին՝ ոստիկաններին, http://www.a1plus.am/1399086.html

[68] Նաիրիտցիները դադարեցրին նստացույցը, http://armtimes.com/hy/read/67907

[69] «Ոտքի Հայաստան»-ը շարունակում է անհնազանդության ակցիան հրապարակում, http://www.a1plus.am/1399325.html

[70] «Բա որ կտրուկ շարժումներ ես անում, մեջքդ չի՞ ցավում». Օսիպյանը՝ Սանասարյանին, http://www.aravot.am/2015/07/30/597604/

կենտրոն, սակայն ոստիկանները վերադարձել են և թույլ չեն տվել դա անել[71]:	
Դեպք 11. Օգոստոսի 21-ին «Ոտքի՛, Հայաստան» նախաձեռնության ցույցի մասնակիցները, շղթա կազմած, փակեցին Ամիրյան փողոցը, սակայն ոստիկանները նրանց ուժի կիրառմամբ հեռացրեցին փողոցից[72]:	
Դեպք 12. Սեպտեմբերի 1-ին «Ոտքի՛, Հայաստան» նախաձեռնության ակտիվիստները որպես անհնազանդության դրսևորում փորձել են անցնել հրապարակի «գորգի» վրա, սակայն ոստիկանները նրանց հեռացրել են: Ցուցարարները փորձել են փակել նաև Հանրապետության հրապարակին հարակից Իտալիայի և Վազգեն Սարգսյանի փողոցները, սակայն ոստիկանները թույլ չեն տվել[73]:	
Դեպք 13. Սեպտեմբերի 11-ին «Ոչ թալանին» քաղաքացիական նախաձեռնության՝ Ազատության հրապարակում հրավիրած հավաքի մասնակիցները երթով շարժվեցին դեպի Բաղրամյան 26՝ սակայն ոստիկանները փակեցին Բաղրամյան 26 տանող ճանապարհը և մայթեզրերը[74]:	
Դեպք 14. Սեպտեմբերի 17-ին Կառավարության շենքի դիմաց բողոքի ակցիա էր իրականացնում Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի բնակիչ Օֆիկ Սարգսյանը, ով պնդում էր, որ հարևանները զավթել են իրեն պատկանող տարածքը: Նա հանդիպում էր պահանջում Կառավարության աշխատակից Ալիկ Ղազարյանի հետ, սակայն ոստիկանները կնոջը հեռացրին կառավարության շենքի մուտքի մոտից[75]:	
Դեպք 15. Սեպտեմբերի 21-ին ոստիկանության աշխատակիցները, Սիրահարների այգուց մինչև Պոռշյան-Բաղրամյան խաչմերուկը շրջափակելով, «Ոչ թալանին» նախաձեռնության անդամներին թույլ չեն տվել իրենց ակցիան իրականացնել Բաղրամյան պողոտայում[76]:	
• **հավաքը ցրելը**	**2**
Դեպք 1. Հուլիսի 6-ի առավոտյան ոստիկանությունը Բաղրամյան պողոտայում էլեկտրաէներգիայի թանկացման դեմ պայքարող ցուցարարներին մինչև 12:30-ը ժամանակ տալուց հետո տարածքից հեռացրեց քաղաքացիների համար բարիկադ հանդիսացող աղբամանները և ցրեց շուրջ երկու շաբաթ շարունակ տեղի ունեցող նստացույցը՝ բացելով Բաղրամյան պողոտան[77]:	

[71] Միջադեպ՝ «Ոտքի Հայաստան» շարժման անդամների և Ոստիկանության միջև. Armtimes.com, http://www.1in.am/1695219.html

[72] Լարված իրավիճակ Հանրապետության հրապարակում., http://www.aravot.am/2015/08/21/601814/

[73] «Ոտքի, Հայաստան»-ը փորձում է փակել Հանրապետության հրապարակին հարակից փողոցները, http://armtimes.com/hy/read/69432

[74] «Ոչ» թալանին քաղաքացիական նախաձեռնության պատասխանը ոստիկանությանը, http://www.aravot.am/2015/09/12/608165/

[75] Ոստիկանները հեռացրին բողոքող կնոջը, http://www.a1plus.am/1406187.html

[76] «Ոչ թալանին» նախաձեռնության անդամները երթով շարժվում են դեպի Հանրապետության հրապարակ, http://armtimes.com/hy/read/69426

[77] Ինչպես ոստիկանությունն «ազատագրեց» Բաղրամյանը, http://www.1in.am/1665121.html http://www.1in.am/1665121.html

Դեպք 2. Սեպտեմբերի 11-ին ոստիկանությունը Բաղրամյան պողոտան փակած ցուցարարներին 6 ժամ հատկացրեց պողոտան ազատելու համար: Սեպտեմբերի 12-ի առավոտյան ժամը 5-ին, երբ լրացավ ոստիկանության սահմանած վերջնաժամկետը, Երևանի փոխոստիկանապետ Վալերի Օսիպյանը ևս կես ժամ տվեց ցուցարարներին պողոտայից հեռանալու համար, իսկ այդ ժամկետը լրանալուց հետո ոստիկանները, ցուցարարների կազմած պատը մեջտեղից ճեղքելով և նրանց օղակի մեջ առնելով, ցրեցին ցույցը[78]:	
Խտրականությունից զերծ մնալու իրավունքի խախտում	**1**
• **ցուցարարի նկատմամբ վարչական վարույթ հարուցելը**	**1**
Դեպք 1. Հուլիսի 6-ին Բաղրամյան պողոտայում տեղի ունեցող նստացույցը ցրելուց հետո ոստիկանության Կենտրոնականի բաժին բերման ենթարկված Արգիշտի Կիվիրյանի նկատմամբ վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի 182 հոդվածով վարչական վարույթ է հարուցել: Հարկ է նշել, որ 46 բերման ենթարկվածներից միայն Արգիշտի Կիվիրյանի նկատմամբ է վարույթ հարուցվել[79]:	
Կարծիքն ազատորեն արտահայտելու իրավունքի խախտում , խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունքի խախտում	**1**
• **հավաքը խոչընդոտելը**	**1**
Դեպք 1. Հուլիսի 19-ին «Ո՛չ թալանին» նախաձեռնության անդամները փորձել են հունիսի 23-ին էլեկտրաէներգիայի դեմ պայքարող խաղաղ ցուցարարների նկատմամբ բռնություն կիրառած և սեռական բնույթի հայհոյանքներ հնչեցրած ոստիկանների նկարները փակցնել Մաշտոցի պուրակում, սակայն ոստիկանությունը խոչընդոտել է ակցիայի իրականացումը: Մասնավորապես, Երևան քաղաքի ոստիկանության ծառայության բաժնի պետ Կարեն Մովսիսյանն ասել է, իբր ցուցարարների այդ գործողությունը ոտնահարում է այդ ոստիկանների պատիվն ու արժանապատվությունը[80]:	
Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունքի խախտում	**4**
• **ցուցարարի նկատմամբ բռնություն կիրառելը**	**4**
Դեպք 1. Հուլիսի 6-ին ցուցարարներին Բաղրամյան պողոտայից ոստիկանության բաժիններ տանելիս հարվածել են անչափահաս Էդուլ Եղիգարյանին, ով պատմել է. «Հարվածում էին ոնց հասցնում էին, իմ մեջքին էին հարվածում, ընկերներիս էլ էին հարվածում, ընկերներիս վրա կան քերծվածքներ: Մի տարիքով մարդ կա ներսում՝ վատացել է, մարդ կա, որի ձեռքն են պատռել՝ արյուն է գալիս»: Ակտիվիստ Նարեկ Այվազյանը հայտնել է, որ ոստիկանության բաժանմունք բերելիս հարվածել են իր գլխին և կրծքավանդակին: Դավիթ Սանասարյանը լրագրողների հետ զրույցում ասել է. «Իմ նկատմամբ եղել է բռնություն ոստիկանական մեքենայի մեջ: Մի քիչ թույլ եմ հիմա ուղղակի: Գլխիս հարված եմ ստացել»:	

[78] Ոստիկանները ցրեցին Բաղրամյան պողոտայի խաղաղ հավաքը. տարան ցուցարարներին, http://www.aravot.am/2015/09/12/608158/

[79] Կան տեղեկություններ բռնությունների մասին. Ոստիկանությունը խոստանում է ուսումնասիրել դրանք, http://galatv.am/hy/news/115600/

[80] Ոստիկաններն այս պահին խոչընդոտում են «Ո՛չ թալանին» նախաձեռնության գործողությունները, http://www.aravot.am/2015/07/19/594287/

Armtimes.com-ի հետ զրույցում Վաղինակ Շուշանյանը հայտնել է, որ Բաղրամյան պողոտայի նստացույցը ցրելու ժամանակ մինչ ոստիկանական մեքենա նստեցնելը, իր նկատմամբ ոստիկանները բռնություն են կիրառել, իսկ ոստիկանական մեքենայում իր աչքի առաջ ծեծել են ակտիվիստներին, այդ թվում՝ անչափահասի: Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն էին տեղափոխվել Դավիթ Սանասարյանը և ևս մեկ ցուցարար: Ոստիկանության Հասարակայնության հետ կապի և լրատվության վարչության պետ Աշոտ Ահարոնյանը Lragir.am-ին հայտնել է, որ Բաղրամյան պողոտայից բերման ենթարկվածներից միայն մեկ ահազանգ է ստացել բռնության վերաբերյալ՝ հավելելով, որ ահազանգողն անչափահաս է եղել[81]:	
Դեպք 2. Հուլիսի 29-ին Հանրապետության հրապարակում «Ոտքի՛, Հայաստան» նախաձեռնության անդամներին Հանրապետության հրապարակի գորգի վրայից տեղափոխելիս ոստիկանները հարվածել են նախաձեռնության անդամ Դավիթ Սանասարյանի գլխին և նա տեղափոխվել է հիվանդանոց[82]:	
Դեպք 3. Օգոստոսի 21-ին «Ոտքի՛, Հայաստան» նախաձեռնության՝ Հանրապետության հրապարակում կազմակերպած ակցիայի ժամանակ ոստիկանության ավագ լեյտենանտ Արթուր Վարդգեսյանը ապտակել է 67-ամյա Հակոբ Նազարյանին: Ըստ վերջինիս խոսքերի՝ նա հարվածից հետո կորցրել է լսողությունը[83]:	
Դեպք 4. Սեպտեմբերի 1-ին «Ոչ թալանին» նախաձեռնության կազմակերպած ակցիայի ժամանակ ոստիկանները վիրավորել են ակցիայի մասնակից Վահրամ Պետրոսյանի աչքը[84]:	
Ընդամենը	**42**

[81] Ոստիկանական մեքենայում անչափահասի են ծեծել, http://www.aravot.am/2015/07/06/590553/, http://www.aravot.am/2015/07/06/590604/ , http://www.aravot.am/2015/07/06/590759/

[82] Կարեն Մովսիսյանը ցուցարարներին խեղկատակ անվանեց, http://www.aravot.am/2015/07/29/597250/

[83] Ոստիկանի հարվածից հետո Հակոբ Նազարյանը կորցրել է ականջի լսողությունը, http://armtimes.com/hy/read/68914

[84] Ոստիկանները վիրավորել են ակցիայի մասնակցին, http://www.a1plus.am/1403031.html

.

Աղյուսակներ

Աղյուսակ 1
2015թ. առաջին, երկրորդ և երրորդ եռամսյակներում գրանցված մարդու իրավունքների խախտումների դեպքեր

Խախտված իրավունք	**Դեպքերի թիվ**		
	I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ
Ազատ տեղաշարժվելու իրավունք	0	1	1
Ազատ տեղաշարժվելու և տեղեկատվություն ստանալու իրավունք	0	0	1
Անձնական ազատության և անձեռնմխելիության	12	21	12
Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք, Լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն	0	1	0
Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու	1	0	0
Անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք (ներառյալ հոգեբանական ճնշումներից, սպառնալիքներից զերծ մնալու իրավունքը)	7	9	14
Անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք, Լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն իրականացնելու իրավունք	0	2	0

Բնակարանի անձեռնմխելիության իրավունք	1	3	0
Գույքի անձեռնմխելիության իրավունք	0	2	0
Գույքի անձեռնմխելիության իրավունք Լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն իրականացնելու իրավունք	0	1	0
Իրավաբանական օգնություն ստանալու իրավունք	0	1	1
Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք	6	5	5
Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք և արդար դատաքննության իրավունք	0	0	1
Լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն իրականացնելու իրավունք	2	4	1
Խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք	19	20	17
Խտրականությունից զերծ մնալու իրավունք	0	0	1
Կարծիքն ազատորեն արտահայտելու իրավունք	0	3	0
Կարծիքն ազատորեն արտահայտելու իրավունքը և անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք	0	0	1
Կարծիքն ազատորեն արտահայտելու իրավունք և խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք	0	0	1
Կյանքի իրավունք և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից զերծ	1	0	0
Սեփականության իրավունք	0	0	1
Տեղեկատվություն ստանալու իրավունք	3	1	0
Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունք	4	10	15
Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունք, Լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն	0	1	0
Ընդամենը	**56**	**85**	**72**

Աղյուսակ 2

2015թ. առաջին, երկրորդ և երրորդ եռամսյակներում գրանցված մարդու իրավունքների խախտումների անհատական դեպքեր

Խախտված իրավունք	**Դեպքերի թիվ**		
	I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ
Ազատ տեղաշարժվելու իրավունք	0	0	1
Ազատ տեղաշարժվելու և տեղեկատվություն ստանալու իրավունք	0	0	1

Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք	3	10	4
Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք	1	0	0
Անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք (ներառյալ հոգեբանական ճնշումներից, սպառնալիքներից զերծ մնալու իրավունքը)	3	5	7
Բնակարանի անձեռնմխելիության իրավունք	1	3	0
Իրավաբանական օգնություն ստանալու իրավունք	0	1	0
Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք	3	4	3
Լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն իրականացնելու իրավունք	1	3	1
Կարծիքն ազատորեն արտահայտելու իրավունք	0	2	0
Կարծիքն ազատորեն արտահայտելու իրավունք և անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք	0	0	1
Սեփականության իրավունք	0	0	1
Տեղեկատվություն ստանալու իրավունք	3	1	0
Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունք	3	7	11
Ընդամենը	**18**	**36**	**30**

Աղյուսակ 3

2015թ. առաջին, երկրորդ և երրորդ եռամսյակներում հավաքների ժամանակ գրանցված մարդու իրավունքների խախտումների դեպքեր

Խախտված իրավունք	**Դեպքերի թիվ**		
	I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ
Ազատ տեղաշարժվելու իրավունք	0	1	0
Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք	9	11	8
Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք, Լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն	0	1	0
Անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք	4	4	7

Անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք, Լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն իրականացնելու իրավունք	0	2	0
Գույքի անձեռնմխելիության իրավունք	0	2	0
Գույքի անձեռնմխելիության իրավունք Լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն իրականացնելու իրավունք	0	1	0
Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք	3	1	2
Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք և արդար դատաքննության իրավունք	0	0	1
Իրավաբանական օգնություն ստանալու իրավունք	0	0	1
Լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն իրականացնելու իրավունք	1	1	0
Խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք	19	20	17
Խտրականությունից զերծ մնալու իրավունք	0	0	1
Կարծիքն ազատորեն արտահայտելու իրավունք	0	1	0
Կարծիքն ազատորեն արտահայտելու իրավունք և խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք	0	0	1
Կյանքի իրավունք և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք	1	0	0
Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունք	1	3	4
Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունք, Լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն իրականացնելու իրավունք	0	1	0
Ընդամենը	**38**	**49**	**42**

Աղյուսակ 4

2015թ. առաջին, երկրորդ և երրորդ եռամսյակներում գրանցված դեպքերի վայրեր

Վայրը	**Դեպքերի թիվ**		
	I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ

ք. Երևան	36	67	56
Արագածոտնի մարզ, ք. Ապարան	0	1	0
Արարատի մարզ, ք. Վեդի	0	2	0
Արմավիրի մարզ, ք. Արմավիր	2	0	0
Արմավիրի մարզ, ք. Մեծամոր	1	0	0
Գեղարքունիքի մարզ, ք. Սևան	0	0	2
Լոռու մարզ, ք. Ալավերդի	0	2	0
Լոռու մարզ, ք. Վանաձոր	0	2	0
Լոռու մարզ, ք. Տաշիր	0	1	0
Կոտայքի մարզ, ք. Աբովյան	0	0	2
Սյունիքի մարզ, ք. Գորիս	0	2	0
Սյունիքի մարզ, ք. Կապան	0	1	0
Տավուշի մարզ, ք. Իջևան	1	0	0
Տավուշի մարզ, ք. Նոյեմբերյան	0	0	4
Շիրակի մարզ, ք. Ախուրյան	0	0	2
Շիրակի մարզ, ք.Գյումրի	14	7	3
ԼՂՀ, ք. Բերձոր	1	0	0
Անհայտ	1	0	3
Ընդամենը	**56**	**85**	**72**

Աղյուսակ 5

2015թ. առաջին, երկրորդ և երրորդ եռամսյակներում ընթացքում գրանցված դեպքերի ժամանակ մարդու իրավունքի խախտումների թվեր

Դեպքերի թիվ	Մարդու իրավունքի խախտումների թիվ		
	I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ
37			1
33		1	
34	անհայտ		
26		անհայտ	
20	1		
8			անհայտ
6		2	
4		13	
4			3
4	2		
2			մոտ 50
2	5		
2			մոտ 5
2		3	
2			2
3			մի քանի տասնյակ
3			մոտ 10
3		6	
3		5	
3		4	
3			4
1		237	

1			մոտ 200
1			մոտ 100
1			48
1			46
1	38		
1			28
1		25	
1	21		
1			մոտ 20
1	19		
1		9	
1		8	
1			8
1		7	
1			5
1	4		
1	3		
Ընդամենը	**123**	**434**	**մոտ 400**